355.21
Ա-93




# ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ ԶԻՆԱԿՈՉԻԿ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան. 1929

355.21
Ս-93
Սպ
MAR 2010
SEP 2013

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ԻՆՁ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ ԶԻՆԱԿՈՉԻԿ

Օրենագրական հավելվածներով

ԿԱԶՄԵՑ ԱՐՏ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան. 1929

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная Библиотека
12200-57

41.202

0101 8 SEP 2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրավեպ. 2727 (բ.) Հր. 1054

Պատվ. № 887. Տիրաժ 3000

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ ՁԻՆԱԿՈՉԻԿ

Մենք ներկայումս քրտնաջան աշխատանք թափելով կառուցում ենք մեր տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով։ Մենք շրջապատված ենք կապիտալիստական պետություններով։ Պարզ է, վոր մեր յերկրի պաշտպանությունը մեզ համար առաջնակարգ խնդիր է։ Նույնիսկ փոքրիկ տնտեսատերը, յերբ իր համար մի փոքրիկ խրճիթ է կառուցում, աշխատում է նրան պահպանել հրդեհից։ Յեթե նա իր համար ձի յե գնում, աշխատում է այդ ձիուն փակած պահել, վորպեսզի գողերը չտանեն։ Իսկ ինչպես մենք, սոցիալիստական հասարակություն կառուցողներս, ամեն կողմից թշնամիներով

շրջապատված լինելով՝ անհրաժեշտ միջոցները ձեռք չառնենք մեր մեծ շինարարությունը պաշտպանելու համար։ Մենք չենք կարող այդ չանել։ Մենք ձգտում ենք խաղաղության։ Մենք բազմիցս այդ մասին ասել ենք և ասում ենք։ Մենք բազմիցս պաշտոնական հայտարարություններ ենք արել, վոր ցանկանում ենք խաղաղ ապրել. Յեթե, այնուամենայնիվ, մեզ չեն հավատում, յեթե բուրժուազիան, այնուամենայնիվ, պատերազմի յե պատրաստվում,—իսկ պատրաստվում է պատերազմի, վորովհետև մեզ ատում է,—այդ դեպքում մենք միանգամայն անխելք կլինեյինք, յեթե ինչպես հարկն է պաշտպանության համար չպատրաստվեյինք՝ մեզ համար պատրաստած հար-

ԱՄՐԱՑՐՈ՛Ւ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒ
ՄԱՆ 3-ՐԴ



վածին հակահարված տալու։ Մենք պատերազմ չենք ուզում և Կարմիր բանակը, վորպես զինված ուժ, պահում ենք միմիայն նրա համար, վորպեսզի, մեզ վրա հարձակում կատարելու դեպքում, կարողանանք Խորհրդային յերկիրը պաշտպանել մեր թշնամիների զինված ուժերի ճնշումից։ Մեզ իբրև թշնամիներ են հանդիսանում բոլոր բուրժուական պետությունները. մանավանդ անգլիական կապիտալիստների պետությունը։ Թեև ներկայումս Անգլիայում բանվորական կառավարություն է, բայց նա շարունակում է անգլիական կապիտալիստների քաղաքականությունը։ Այդ կառավարությունը աշխատում է մեր հարևան կապիտալիստական պետություններից կազ-

ԹՅՈՒՆԸ: ԲԱԺՆԵԳՐՎԻ՛Ր ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑ-
ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆԸ:

մել մեր դեմ միացյալ մի միություն։ Յեվրոպայի կապիտալիստները մեր սահմանակից Լեհաստանում օգնեցին ֆաշիստ Պիլսուդսկուն իշխանության գլուխն անցնել և շարունակում են նրան օգնել՝ զինված ու պատրաստելու մեզ վրա հարձակվելու համար։

Միջազգային դրության սրվածությունը, որ ներկայումս կա, օրինակ՝ չինական ավազակների՝ Չին-Արևելյան յերկաթուղու վրա կատարած հարձակումը, որը պատրաստել և ղեկավարել են կապիտալիստները, դեռևս պատերազմ չե. սակայն այդ հանգամանքը մոտեցնում է մի այնպիսի մոմենտի, յերբ մեր դեմ կարող է իսկական պա-

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԲԱՆՎՈ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Ե ՑԱՆԿԱՆՈՒՄ․ ԻՍԿ ԱՆՁՆՎԻՐԱԲԱՐ, ՄԻԱՍԻՐՏ ՈՒ ԽՈՐՏԱԿԻՉ ՏԵՐԱԶՄԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՏԱՐԻ



տերազմ սկսվել։ Ուստի, յերբ մենք դեպի յերկրի պաշտպանության խնդիրները մեծ հետաքրքրություն ենք ցուցաբերում, այդ յերբեք իզուր չե, այդ հարկավոր է և շատ օգտակար մեր ամբողջ յերկրի պաշտպանության պատրաստության գործի համար։

Կարմիր բանակի յուրաքանչյուր մարտիկ Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների զավակը լինելով՝ հանդիսանում է այնպիսի մարտիկ, վորպիսին չունի և չի կարող ունենալ վոչ մի բուրժուական պետություն։ Յեթե տեխնիկական պատրաստության տեսակետից բուրժուական պետություններն ավելի լավ են պատրաստ-

ՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՅԵՐԿԻՐԸ, ՅԵԹԵ ՆՐԱՆ ԿՌՎԵԼ ՍՏԻՊԵՆ, ՆԱ ԿԿՌՎԻ ԿԵՐՊՈՎ, ԻՆՉՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱ-ՆԵՐԻՆ ԵՐ ԿՌՎՈՒՄ։

ված, քան մենք, վոր մոտիկ ապագայում արմատապես փոփոխության և չենթարկվելու, սակայն քաղաքական-բարոյական կայունության տեսակետից մեր մարտիկին հավասարը չկա ամբողջ աշխարհում։ Այդ նվաճումները և այդ բազիսը, վորի վրա մենք զարգացնում ենք մեր հաջողությունները, յերաշխիք են այն բանի, վոր մեր Կարմիր բանակը ամրանում և ամեն տեսակետից ուժեղանում է, յետևը թողնելով բուրժուական պետությունների լավագույն բանակները։

Իմպերիալիստական պետությունների բանվորական մասսաները մեզ հետ համերաշխ են, բայց նրանք մեզ ել ավելի զգալի պաշտպանություն ցույց կտան, յեթե մենք ամբողջ ջանքերով

ԱՄՈՒՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԵՏ ՄԵՆՔ ԱՆ
ԱՎԱՆԴԸ՝ ԱՄՐԱՑՐՈ՛Ւ



ամրացնենք Կարմիր բանակը։ Չե՞ վոր կապիտալիստները վաղ թե ուշ, չնայած իրենց հակասություններին, վոր յերբեք վերջ չեն ունենալու, այնուամենայնիվ կարող են խոսքը մեկ անել մեզ վրա զինված հարձակում կատարելու։ Մենք պետք է միշտ, ամեն որ, ամեն ժամ հիշենք այդ և պատրաստ լինենք դիմադրելու ամեն տեսակի անակնկալությունների։ Մենք վորքան լավ պատրաստ լինենք, այնքան ավելի լավ հաշիվ կտեսնենք ամեն տեսակի թշնամու հետ։ Կարմիր բանակն ամբողջովին պետք է լինի գրագետ, կուշտ, վոտից գլուխ լավ հագնված, ահարկու և անհաղթելի։

Կարմիր բանակն ամբողջ աշխարհի բանվորների, հողագուրկ չքավորնե-

ՊԱՐՏԵԼԻ ՅԵՆՔ։ ԿԱՏԱՐԻ՛Ր Ի Լ Յ Ի Չ Ի
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ։

րի սիրելի զավակն է, ճնշվածների հա-
վատարիմ պաշտպանն է ու ճնշողների
անհարկու թշնամին։ Բանվոր դասակար-
գի մեծ իդեալ՝ կոմմունիզմը Կարմիր
բանակի համար աշխարհում ամենա-
թանգագին բանն է։ Յուրաքան-
չյուր կարմիր-բանակային, հրամանա-
տար և քաղաշխատավոր պետք է պար-
ծենա կարմիր մարտիկի կոչումով։ Կար-
միր-բանակայիններինոր ուժերը պետք
է արժանավոր ժառանգորդները հան-
դիսանան քաղաքացիական պատերազ-
մի մեր հերոսների, Պերեկոպի հերոս-
ների, ինչպես և Վրանգելին, Յուդե-

---

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՅԵՎ ՆՐԱ ՍՊԻՏԱԿ-ԳՎԱՐ
ԿՏԱՆԻ ԴԵՊԻ ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՍՏՐԿԱ
ԹՅԱՆ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ՎԵՐԱ
ՄԻՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ, ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ԽՈՐ
ՋՏԱՆՔ ԱՐՅՈՒՆՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀԵՂԱ
ՄԱՀ ՁԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ



նիչին, Կոլչակին, Դենիկինին, Անդրո·
կովկասի հակահեղափոխականներին՝
դ·աշնակներին, մենշևիկներին և մուսա-
վաթականներին հաղթող հերոսների։

Կարմիր բանակի մարտիկը պետք
է պաշտպանի բանվորներին և գյուղա·
ցիներին, քաղաքի և գյուղի չքավոր-
ներին ամեն տեսակի շահագործողնե-
րից։ Հողն այժմ պատկանում է խոր-
հրդային իշխանության. աշխատավոր-
ների հողային այդ իրավունքը պետք է
պաշտպանել։ Գործարաններն ու ֆաբ-
րիկաները նույնպես գտնվում են պրո-
լետարիատի պետության ձեռքում։ Յեր-

---

ԴԻԱԿԱՆ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ
ՏԻՐՈՒԹՅԱՆ, ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՃՈՐՏՈՒ-
ԴԱՐՁԸ։ ՊԱՇՏՊԱՆ ԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ԿԱՐ-
ՀԸՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ ՁԵՌՔԻՑ
ՓՈԽԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ։
ՆԵՐԻ ԴԱՀԻՃՆԵՐԻՆ։

կաթուղիներն ու հաղորդակցության բոլոր ճանապարհները գտնվում են մեր պետության ձեռքում։ Հանքերն ու հանքահորերը նույնպես։ Մեր Միության մեջ ստեղծվել է և ստեղծվում է ժողովրդական հասարակական տնտեսություն։ Մենք լայն ճակատով սոցիալիզմ ենք կառուցում և գնում ենք դեպի վարձու աշխատանքի ու կապիտալիզմի գերիշխանության մնացորդների կատարյալ վոչնչացումը։ Բանվորն ու գյուղացին վոչ միայն իրավունք են ձեռք բերել, այլ նրանք իրենց ձեռքում են պահում իշխանությունը, վորի միջոցով նրանք ամբողջ կյանքը պետք է վերակառուցեն նոր հիմունքներով։ Ամենուրեք ուժը բանվորների, գյուղացիների, կարմիր-բանակայինների և





նավաստիների պատգամավորների խորհուրդների ձեռքին է։ Կարմիր բանակի մարտիկը պաշտպանում է այն ամենը, ինչ ձեռք է բերված հեղափոխության գնով։

* * *

Առանց կարգապահության չկա կազմակերպություն, չկա տնտեսություն, չկա պետություն, չկան համերաշխ գործողություններ, չկա հաղթանակ․ ռազմական գործում կարգապահությունն ավելի հարկավոր և կարևոր է, քան վորևէ այլ տեղ։ Կարմիր բանակի կարգապահությունը կայանում է բանվորա-գյուղացիական իշխանության հրատարակած որենքներին յենթարկվելու, ռազմական ծառայության կանոնները պահպանելու, զինվորական պարտակա-

նություններն անշեղորեն կատարելու և բանվորա-գյուղացիական պետության կողմից նշանակված հրամատարների և կոմիսարների հրամանները ճիշտ կերպով կատարելու մեջ։

Կարմիր բանակի կարգապահության նշանակությունը լավ յուրացնելու համար այդ բանակում անգրագետ մարդիկ չպետք ե լինեն։ Անգրագետ Կարմիր բանակայինը չի կարող ռազմական գործը լավ ուսումնասիրել, չի կարող հաստատ կերպով իմանալ, թե ինքն ինչի համար ե կռվում։ Կարմիր-բանակայինը վորքան ավելի կրթված լինի, այնքան ավելի լավ կկռվի և կպաշտպանի բանվորների և գյուղացիների իրավունքները, վորքան ավելի լավ իմանա, թե ինքն ինչի համար ե կռվում, այնքան ավելի լավ կպաշտա-

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱ



պանի բանվորների և գյուղացիների արդարացի գործը։

Կարմիր-բանակայինը պետք ե մշտապես պարապի ընթերցանությամբ և ոգտվի այլ մարդկանց փորձառությունից։ Պետք ե կարդալ ու գրել գիտենալ, վորպեսզի ավելի լավ իմանալ ու հասկանալ սոցիալիզմի-կոմմունիզմի մեծ ղեկավարներին՝ Մարքսին ու Լենինին։ Կյանքում մարդու համար ամենամեծ հաճույքն այն ե, յերբ նա ֆիզիկական աշխատանքին միացնում ե նաև մտավոր աշխատանքը։ Պետք ե ամեն որ լրագիր կարդալ, իմանալ, թե յուրաքանչյուր որ ինչ ե կատարվում իր յերկրում և ուրիշ պետություններում։ Պետք ե հետևել ամբողջ աշխարհի աշխատավորների պայքարին։ Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք ե հի-

ՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆ ՈՒ ՈԳՆԱԿԱՆՆ Ե։

շի, վոր ինքը զենքը ձեռքին՝ մասնակցություն ե ունենալու ամբողջ աշխարհի աշխատավորների բախտավոր ապագայի համար մղվող պայքարին։

Կարմիր բանակի սերտ և անխզելի կապը հանրապետությունների միության աշխատավոր մասսաների հետ հանդիսանում ե նրա մարտունակության հիմնական յերաշխիքը։ Յուրաքանչյուր մարտիկ յերբեք չպետք ե մոռանա, վոր ինքը զինված բանվոր և գյուղացի յե և բնակչության ներսում պետք ե լինի որինակելի, ճշտապահ, մաքուր և պետք ե պահպանի կարմիր մարտիկ-քաղաքացու արժանապատվությունը։ Կարմիր բանակն ոգնություն ե հասնում աշխատավորներին այն դեպքերում,

---

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊԱՏՐԱՍՏ Ե: ՆՐԱ ԱՆ
ՆՐԱ ՆԵՐԿԱՆ ՀԱՄԱՌ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ
ԹԱԿԱՆ ՄԱՐ



յերբ տեղի յե ունենում վորևե տարերային դժբախտություն, յերկրաշարժ, հեղեղ, յերաշտ, հրդեհներ և այլն։ Բոլոր յերկրների բնակչության ներսում մենք ունենք շատ բարեկամներ և դաշնակիցներ. այդ բանը մեզ համար շատ թանկագին ե, պետք ե այդ բարեկամությունը մինչև վերջ ջերմորեն պահպանել։

Բոլոր յերկրների բանվորներն ու չքավորները շատ են սիրում մեր յերկիրը։ Մեր յերկրի Կարմիր բանակի գոյությամբ նրանք հպարտանում են, վորպես աշխարհումս միակ և առաջին բանակի, վորը հարկ յեղած դեպքում պաշտպան կհանդիսանա նաև նրանց շահերին։ Յուրաքանչյուր կարմիր բա-

---

ՑՅԱԼԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՓԱՌՔՈՎ Ե ԾԱԾԿՎԱԾ,
Ե, ԻՍԿ ԱՊԱԳԱՆ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՂ-
ՏԵՐԻ ՄԵՋ:

391
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная Библиотека
12200-57

նակային պետք ե հիշի, վոր ինքը հանդիսանում ե աշխատավորների՝ բանվորի ու գյուղացու ազատության պաշտպան։ Մեռնելիս էլ լինի, նա չպետք ե այդ բանը մոռանա, քանի վոր նրա գործը շարունակելու յե իր ընկերը, վոր նրան ե հետևելու։ Մոտ վաթսուն տարի սրանից առաջ, յերբ Պարիզի կոմմունարներն ապստամբեցին կապիտալիստների դեմ և նրանց քշեցին, նրանք հաղթվեցին։ Հարյուրավոր և հազարավոր բանվորներ ընկան այն ժամանակ Պարիզի բարրիկադներում հանուն կոմմունիզմի, սակայն նրանք այն ժամանակ զուր չընկան, բանվորների գործի համար ընկած Պարիզի կոմմունարների վոսկրների վրա ապստամբեցին մեր Միության բանվորներն ու

ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե։ ԲԱՆՎՈ՛Ր ՅԵՎ



գյուղացիները, վորոնք կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ քշեցին կապիտալիստներին և կալվածատերերին յերկրագնդի մեկ վեցերորդ մասից և հաստատեցին խորհրդային իշխանություն։

Մենք ներկայումս կանգնած ենք հերթական զորակոչի առաջ, յերբ Կարմիր բանակը պետք ե նորից 50%-ով փոխի իր շարքերը։ Ներկայումս մեր առաջ խնդիր ե դրված այդ փոխարինումը կատարել այնպես, վոր կարելի լինի ամրացնել Կարմիր բանակը, ուժեղացնել նրա կայունությունը. մանավանդ անհրաժեշտ ե այդ անել ներկա մոմենտում, յերբ Խորհրդային Միությանը նորից են սպառնում նրա

ՊՆԴԵԼԸ ՅՈՒՐՔՔԱՆՋՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐԻ ԳՅՈՒՂԱՑԻ, ՍՈՎՈՐԻ՛Ր ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ։

թշնամիները։ Մենք պետք է այդ փոխարինումը կատարենք ավելի կազմակերպված, ավելի արագ։ Մեր որենքների համաձայն Խորհրդային Միության յուրաքանչյուր աշխատավոր պետք է լինի ռազմականորեն պատրաստված, վորպեսզի անհրաժեշտության դեպքում զենքը ձեռքին պաշտպան հանդիսանա Խորհրդային Միությանը։ Ռազմական պատրաստությունը կատարվում է զանազան յեղանակներով։ Վոմանք զինվորական ծառայությունն անցնում են կադրային զորամասերում, այսինքն մշտական բանակում, մյուսները՝ յերկրային զորամասերում, վորտեղ զինվորական ծառայությունը չի պահանջում, վոր բանակային կազմը յերկար ժամանակ

**ՀԱՄԿ(Բ)Կ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՆ**
**ՄԱԽՄԲԵՆՔ ՄԵՐ ՇԱՐ**



կտրվի իր բնակավայրից, իր տնտեսությունից։ Վերջապես ռազմական ուսուցումն անցնում են արտադրական կարգով՝ պարբերական կարճատև հավաքների միջոցով, արտադրական պատրաստության հրահանգիչների և պահեստի հրամանատարական կազմի ղեկավարությամբ։ Վլադիմիր Իլյիչ Լենինը աշխատավորների ընդհանուր զինվորական ուսուցման խնդիրը համարել է ամենակարևոր խնդիր մեր պետության համար, վորը գտնվում է կապիտալիստական շրջապատման մեջ։ Գործնականում, իհարկե, բոլոր զինապարտներին մենք ռազմական գործին դեռ չենք վարժեցնում, և այդ մեր մեծ պակասությունն է, վորովհետև, պատերազմ ծագելու դեպքում, մենք

**ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Է։ ԱՎԵԼԻ ՍԵՐՏ ՀԱ-**
**ՔԵՐԸ ՀԱՄԿ(Բ)Կ ՇՈՒՐՋԸ։**

ստիպված կլինենք Խորհրդային հանրապետությունը զենքով պաշտպանելու ընդունակ բոլոր քաղաքացիներին դրոշի տակ կանչելու: Մենք աստիճանաբար հասնում ենք աշխատավորների ընդհանուր ռազմական ուսուցման և այդ տեսակետից հաջողություններ ունենք: Սակայն մենք իսկապես, ծառայության ավելի յերկար ժամկետ ունեցող կադրային բանակ ենք կանչում, իհարկե, բնակչության մի փոքրաթիվ մասին: Մեր կադրային բանակն իր քանակով, համեմատած այն տարածության հետ, որը գրավում է ԽՍՀՄ, և իր բնակչության թվի համեմատ հանդիսանում է աշխարհում ամենափոքր բանակը: 24 թվին մենք կադրային

---

ՄԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ,
ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՆ ՊԱՏ
ԺԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ



զորքի մեջ եյինք կանչել բնակչության
յուրաքանչյուր 375 մարդուց մեկ
մարդու, 25 թվին՝ 480 մարդուց մե-
կին, 26 թ.՝ 530 մարդուց մեկին, 27-
28 թ. ավելի քիչ, 29 թ. մենք կան-
չում ենք ավելի պակաս, քան նախորդ
տարիներում: Ամենից առաջ դուք
տեսնում եք, որ ամեն տարի զինա-
կոչի յենթակա յերիտասարդության
թիվը պակասում է, մինչդեռ հին, նի-
կոլայան բանակի մեջ եյին կանչում
բնակչության յուրաքանչյուր 200 մար-
դուց մեկին, Լեհաստանում ներկա-
յումս յուրաքանչյուր 110 մարդուն
ընկնում է մեկը: Մեր թշնամիները
ուսուցնում են այսպես կոչված կարմիր
իմպերիալիզմը և դրանով ծածկում են

---

ՎՈՐՊԵՍԶԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑԵՆՔ:
ՌԱՍՏՈՒՄ՝ ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԻ-
ԽՍՀՄ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

սպառազինման այն իսկական աճումը, որը մենք տեսնում ենք Արևմտյան Յեվրոպայում։ Նրանք չափազանցնում են Կարմիր բանակի մշտական թիվը, հաշվելով մոտավորապես մեկ միլիոն մարդ։ Այսպիսով չափազանցում են մեր բանակի թիվը համարյա յերկու անգամ։ Մենք ընդունում ենք և չենք թագցնում, որ մեր զորակոչի յենթակա ամբողջ ընդհանուր ռազմական ուսուցում տալու խնդիրը մենք կիրագործենք պատվով, շնորհիվ բնակչության կողմից տեղի ունեցող այն արձագանքի, որ ներկայումս նկատվում է բանվորների և գյուղացիների շրջաններում։ Մենք այդ գործը կկատարենք վոչ միայն կադրային զորամասերի միջոցով, այլև արտազորական պատ-

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԻ ՀԱՆԴԵՊ ԹՈՂ
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ



րաստության և յերկրային զորամասերում տեղի ունեցող հավաքների միջոցով և ամբողջ խորհրդային հասարակայնության օգնությամբ։

Ընկե՛ր զինակոչիկնե՛ր, կարիք չկա այստեղ հատկապես խոսելու զինվորական ծառայությունից ամեն տեսակի խուսափումների դեմ կռվելու վորևե միջոցի մասին, քանի վոր այդպիսի խուսափումները շատ հազվադեպ են մեր Միության մեջ։ Մենք անց ենք կացնում 6-րդ հերթական նորմալ զինակոչը մեր Կարմիր բանակում, և այդ խնդիրն այլևս մեզ չի հուզում։ Մենք այժմ էլ հավաստացած ենք և ունենք բոլոր հիմունքները կարծելու, որ նոր զորակոչային կոնտինգենտը կհավաքվի համերաշխ կերպով և նորից

ԱՎԵԼԻ՛ ԱՄՐԱՆԱ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ։

ու ավելի մեծ չափով կամրացնի բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի շարքերը։ Կարմիր բանակը բնակչության լայն մասսաներում իրավացի կերպով համարվում է քաղկրթական դպրոց, և պետք է ասել, վոր բնակչությունը Կարմիր բանակին առաջին հերթին պահանջներ է առաջադրում, վորպես հանրակրթական և քաղաքական դպրոցի։ Սակայն պետք է հիշել, վոր Կարմիր բանակի գոյության հիմնական խնդիրը հանդիսանում է յերիտասարդ սերնդի մարտական պատրաստությունը՝ մեր սոցիալիստական հայրենիքն իր թշնամիներից զենքը ձեռքին պաշտպանելու համար։

---

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՍՈՑԻԱ
ՐՈՒՄ։ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵ՛Ր, ԱՋՔԻ ԼՈՒՍԻ
ՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՈԳԱ
ԳՅՈՒՂԱՑԻ՛, ԱՎԵԼԻ ԱՄՈՒՐ ՊԱՀԻՐ



Հեղափոխական պարտականությունը պահանջում է զինակոչիկից, մանավանդ ներկա խիստ պատասխանատու մոմենտին, հատուկ դիմացկունություն և տոկունություն՝ կատարելու այն բոլոր պարտականությունները, վորոնք կապված են Խորհրդային Միության աշխատավորների զինված պաշտպանի կոչման հետ։ Յուրաքանչյուր զինակոչիկ պետք է գիտենա, վոր բանակում նրան սպասում է ռազմական ուսումը, քանի վոր Կարմիր բանակը նախ և առաջ մարտական դպրոց է, հաղթանակների դպրոց է բանվորների և գյուղացիների դասակարգային թըշնամիների հանդեպ։ Յուրաքանչյուր

---

ԼԻՋՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՐԿ-
ՊԵՍ ՊԱՀԵՔ ՆՐԱՆ։ ՈՒԺԵՂԱՑՆԵՆՔ ԿԱՐ-
ՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՄԱՍԻՆ։ ԲԱՆՎՈ՛Ր,
ԿԱՊԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԵՏ։

զինակոչիկի պարտքն է բուռն կըրքով ձգտել ռազմական գիտելիքներ ձեռք բերելու, ձգտել հմուտ մարտիկ դառնալու, որ կատարելագործված լինի տիրապետելու իր զենքին և այն բոլոր հատկություններին, որոնք անհրաժեշտ են օրինակելի մարտիկին։ Յուրաքանչյուր զինակոչիկ պետք է ատելությամբ լցված լինի դեպի շահագործող մասսաները, հավատարիմ լինի բանվորների ու գյուղացիների գործին, օժտված լինի անվեհերությամբ, առնականությամբ, քաջությամբ, ճարպկությամբ, հնարագիտությամբ և հավատ ունենա դեպի իր զենքն ու իր ռազմական արվեստը։

Քաղաքական գիտակցությունը և խորհրդային իշխանության խնդիրների

ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՈՒՄԸ ԿԱՄՐԱՑՆԻ ԳՅՈՒՂԱՑԻ, ՈԳՆԻՐ ԸՆԳԱՄՅԱ



ճիշտ ըմբռնումը պետք է զինակոչիկի մեջ առաջ բերեն մեծ խանդավառություն դեպի ռազմական գույքը, որպես ժողովրդական գույք։ Պարզ կերպով պատկերացնելով իրեն իր պարտականությունները, զինակոչիկը միևնույն ժամանակ պետք է գիտենա նաև իր իրավունքները։ Կարմիր-բանակայինը հանդիսանալով իբրև Խորհրդային հանրապետության քաղաքացի, լայն մասնակցություն է ունենում յերկրի քաղաքական և հասարակական կյանքում։ Իր համառ և տոկուն աշխատանքով զինվորական ծառայողը կարող է կարմիր-բանակայինի դիրքից բարձրանալ և հասնել ամեն տեսակի հրամանատարական պաշտոնի, որի ամենափայլուն ապացույցն է այն փաստը,

ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ ԲԱՆՎՈՐ ՅԵՎ ԳԼԱՆԸ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒՆ։

վոր բանակի հրամանատարների և քաղաշխատողների մեծագույն մասսան դուրս է յեկել բանվորներից և գյուղացիներից, վոր ներկայումս Կարմիր բանակի գլուխն է կանգնած նախկին հանքագործ բանվոր և հին կոմմունիստ ու լենինիստ Կլեմենտիյ Յեֆրեմովիչ Վորոշիլովը։

Մեր բանակը մեծ չէ։ Մեր բանակը ԽՍՀՄ-ի պաշտպանության և խաղաղ շինարարության բանակն է, սակայն այն մոմենտին, յերբ թշնամիների հարձակումը իրականություն կդառնա, Կարմիր բանակի շուրջը կըհամախմբվեն միլիոնավոր աշխատավորներ։

Խորհրդային իշխանության ու լե-

---

ԿԵՑՑԵ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՖԵԴԵ



նինյան կուսակցության նվիրվածությամբ միացած՝ մենք այնպիսի հզոր ուժ կկազմենք, վոր ջարդուփշուր կանենք այն բոլոր փորձերը, վորոնք կարվեն թշնամու կողմից՝ խանգարելու ԽՍՀՄ-ի աշխատավորների խաղաղ սոցիալիստական շինարարությունը։

Մենք կկռվենք, և կպաշտպանենք սոցիալիստական շինարարությունն այնպես, ինչպես յերբեք աշխարհում վոչ մի բանակ չի կռվել։

Մենք կկռվենք մինչև մեր արյան վերջին կաթիլը, քանի վոր բանվոր դասակարգը վորոշել է սոցիալիզմ կառուցել, և մենք այդ նպատակով, ինչ ել վոր լինի, կհաղթենք։

---

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ — ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՐԱՑԻԱՆ։

## Հավելված 1.

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ-ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ

Գործոն զինվորական ծառայության զորակոչի յենթակա քաղաքացիների համար սահմանվում են արտոնություններ ըստ ընտանեկան-նյութական դրության: Կարմիր բանակում գոյություն ունեն ըստ ընտանեկան-նյութական դրության յերեք կարգի արտոնություններ.

1-ին կարգի արտոնությունն ընտանիքի միակ աշխատունակ անդամի համար է, վորտեղ կան յերեք և ավելի ընտանիքի անաշխատունակ անդամներ, վորոնք պահվում են զորակոչի յենթակա անձնավորության աշխատանքով.



2-րդ կարգի արտոնությունն ընտանիքի միակ աշխատունակ անդամի համար է, վորտեղ կան մեկ կամ յերկու ընտանիքի անաշխատունակ անդամներ, վորոնք պահվում են զորակոչվողի աշխատանքով.

3-րդ կարգի արտոնությունն ընտանիքի աշխատունակ անդամի համար է, յեթե այդ ընտանիքում կա աշխատունակ մի ուրիշ անդամ, և այն պայմանով, յեթե վերոհիշյալ աշխատունակ անդամների աշխատանքով պահվում են ընտանիքի յերեք և ավելի անաշխատունակ անդամները:

Ընտանիք ասելով հասկացվում է միասին ապրող և միասին մեկ տնտեսություն վարող կամ ընդհանուր միջոցներով ապրող ազգակցական զանազան աստիճանների վրա գտնված մարդկանց ազգակցական-կենցաղային համախմբումը:

**Ծանոթ.**— 1. Ընտանիքի կազմին են պատկանում նաև այն անձնավորությունները, վորոնք նրա մեջ են մտել ամուսնանալու կամ վորդեգրության միջոցով։

2. Գյուղացիական ընտանիքի կազմից չեն հանվում ժամանակավորապես աշխատանքի գնացածները, յերբ նրանք որենքի հիման վրա ծխի կազմից դուրս յեկած չեն համարվում։

3. Արտոնության իրավունքի վորոշման ժամանակ ընտանիքի կազմի մեջ չպետք է մտնեն՝ ա) նրա այն անդամները, վորոնք գործոն զինվորական ծառայության մեջ են համարվում Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի կադրերում. բ) զորակոչվողի ընտանիքի այն անդամները, վորոնք նրա զորակոչվելու մոմենտին դատավճռի համաձայն յենթարկված են ազատազրկման, վորի ժամկետը վերջանում է տվյալ զորակոչից սկսած 2 տարուց վոչ շուտ. գ) ընտանիքի



այն աշխատունակ անդամները, վորոնք գտնվում են պետական հովանավորության ներքո և զորակոչվողի աշխատանքով չեն պահվում. դ) այն անձնավորությունները, վորոնք սահմանված կարգով համարվում են իբրև անհայտ բացակայողներ։

4. Արտոնության իրավունքների վորոշման ժամանակ պետք է ուշադրության առնել այնպիսի ընտանեկան բաժանումները, վորոնք կատարված և գրանցման են յենթարկված կարգով վոչ ուշ, քան զորակոչի ժամկետից մեկ տարի առաջ։

Ընտանիքի անաշխատունակ անդամներ են համարվում՝

ա) արական սեռի մինչև 18 տարեկան և 55 տարեկանից բարձր մարդիկ և իգական սեռի մինչև 18 տարեկան և 50 տարեկանից բարձր կանայք.

բ) իգական սեռի այն անձնավորությունները, վորոնք զորակոչի որը գը-

տրնվում են հղիության վիճակում, վորը հաստատված է բժշկի կողմից.

գ) իգական սեռի այն անձնավորությունները, վորոնք խնամում են նույն ընտանիքի կազմի մեջ մտնող 8 տարեկանի չհասած յերեխաների և

դ) այն հաշմանդամները, վորոնք առորյա կենսական կարիքների բավարարման համար մշտական ոգնության են կարոտ, նաև ամեն տեսակի աշխատանքի անընդունակ հաշմանդամները։

Վորպես կանոն 1-ին կարգի արտոնություն ունեցողները բանակ չեն կանչվում. չեն կանչվում նաև 2-րդ կարգի արտոնություն ունեցողները. 3-րդ կարգի արտոնություն ունեցողները կարող են բանակ կանչվել հերթական զորակոչների ժամանակ կարիքի դեպքում։

Յեթե 3-րդ կարգի արտոնություն ունեցողը բանակ է կանչվում, նրա ըն-



տանիքը նյութական ոգնություն է ստանում ամսական 7 ռուբլու չափ, սկսած զորակոչվողի բանակ կանչվելու որից մինչև նրա՝ կադրային մասից վերջնականապես յերկարատև արձակուրդի գնալը։

**Ծանոթութ.** — Յերբ մեկը պատահական կամ կամավոր կերպով բանակ է ընկել և 1-ին կամ 2-րդ կարգի արտոնություն ունի, այդ դեպքում 1-ին կարգի արտոնություն ունեցողի ընտանիքն ամսական ստանում է 14 ռ., իսկ 2-րդ կարգի արտոնություն ունեցողի ընտանիքը՝ 10 ռ. 50 կոպ.։

## Հավելված II.

# ՄԻԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ըստ պարտադիր զինվորական ծառայության օրենքի միջնակարգ և բարձրագույն դպրոցավարտ յերիտասարդները պետք է զինվորական ծառայության անցնեն։ Դրանց համար ծառայության ժամկետ է սահմանվում 1 տարի, վորի համար էլ նրանք միամյա ծառայողներ են կոչվում։

Նրանք անցնում են կարճ ժամկետի ծառայություն, վորովհետև նրանք դըպրոցներում յեղած ժամանակ ուսումնասիրում են ռազմական գիտություններն ու շարային ուսուցումը, այնպես վոր յերբ նրանք զորամաս են գալիս, արդեն զինվորական ծառայության



մասին սկզբնական գաղափար ունենում են։

Բոլոր միամյա ծառայողները, մեկ տարվա ծառայությունն անցնելուց հետո, քննություն են տալիս Կարմիր բանակի պահեստի հրամատարի կոչում ստանալու համար։ Քննություն չբռնողները 2 ամիս անց նորից են քննվում և յեթե նորից են կտրվում, ծառայում լրացնում են շարքային կարմիր-բանակային ծառայության ժամկետը, այսինքն 2 տարի։

Հավելված III.

## ՏԱՐԿԵՏՈՒՄՆԵՐԻ (отсрочки) ՄԱՍԻՆ

Ամեն տարի զորակոչի սկզբին դըպրոցական հաստատություններում լինում են մեծ թվով յերիտասարդներ, վորոնց հասակակիցները բանակ են կանչվում։

Վորպեսզի հնարավորություն տրվի այդ յերիտասարդներին ավարտելու իրենց դպրոցը, «Պարտադիր զինվորական ծառայության որենքով» նրանց տարկետումներ են տրվում մինչև վորոշ հասակի հասնելը․ որինակ, միջնակարգ դպրոցների համար մինչև 23 տարեկանը ներառյալ, իսկ բարձրագույն դպրոցների համար՝ մինչև 28 տարին ներառյալ։ Այդ անձնավորություններն



իրենց դպրոցն ավարտելուց հետո զինվորական ծառայության են անցնում իբրև միամյա ծառայողներ, իսկ յեթե նրանք վորևե պատճառով չեն կարողացել իրենց դպրոցը վերջացնել, այդ դեպքում զինվորական ծառայությունն են կատարում 2 տարի, ինչպես առհասարակ բոլոր կարմիր-բանակայինները ծառայում։

---

Հավելված IV.

## ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԶՈՐ (ополчение)

Միութենական Հանրապետությունների Սահմանադրության հիման վրա ընտրական իրավունքից զուրկ անաշխատ տարրերը համարվում են թիկունքային աշխարհազորում։ Թիկունքային աշխարհազորի մեջ են հաշվում նաև այն անձնավորությունները, վորոնք դատարանի վորոշմամբ դատապարտված են քաղաքական իրավազրկման կամ Միութենական Հանրապետության սահմաններից կամ թե առանձին յերկրամասից արտաքսվելուն՝ բնակությամբ կամ առանց բնակության, զրկվելով վորոշ տեղերում ապրելու իրավունքից, ինչպես և վարչական կարգով արտաքսվածները կամ աքսորվածները։



Ռազմական կոմիսարիատներում հերթական զորակոչի ժամանակ կազմվում են թիկունքային աշխարհազորի մեջ մտնող բոլոր անձնավորությունների ցուցակները։

Խաղաղ ժամանակ թիկունքային աշխարհազորի մեջ հաշված քաղաքացիները և հերթական զորակոչի ժամանակ զինվորական ծառայության համար նրանց պիտանի համարվողները յենթարկվում են հարկման, այն պատճառով, վոր նրանք իբրև թշնամի տարրեր ազատվում են Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակում ծառայելուց։

Իսկ պատերազմի ժամանակ թիկունքային աշխարհազորի մեջ գտնվողները մտնում են թիկունքի և ճակատի սպա-

391



սարկման համար կազմակերպվող առանձին խմբերի մէջ. իբրև կանոն՝ նրանց զէնքը ձեռքին ռազմական գործին չեն վարժեցնում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Երևան
Публичная Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0217841

41.202

Степанян

**Что должен знать каждый призывник**

Գինը 5 կ.